

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Մարտի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձ է եղել նորմայից 2-4 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 30-ին. Տավուշում +22…+25^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +18…+20^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +23…+25^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +28…+31^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +20…+22^{0}C, Շիրակում՝ +15…+20^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +14…+19^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19…+21^{0}C, Գեղարքունիքում՝ +15…+19^{0}C, Լոռիում՝ +21…+23^{0}C, Արմավիրում՝ +24…+26^{0}C, Արարատում՝ +25…+27^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +14…+16^{0}C, նախալեռներում՝ +18…+23^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 23-25-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում 0…-5^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -8…-10^{0}C, նախալեռնային շրջաններում՝ 0…-3^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ -1…+3^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -3…-8^{0}C (Սիսիան՝ -9^{0}C), Շիրակում՝ -7…-10^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ -6…-10^{0}C, նախալեռնային շրջաններում՝ 0…-3^{0}C, Գեղարքունիքում՝ -5…-10^{0}C, Լոռիում՝ -9…-11^{0}C (Օձուն՝-3^{0}C), Արմավիրում՝ 0…-2^{0}C, Արարատում՝ 0…-1^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -5…-10^{0}C, նախալեռներում՝ -1…-3^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումներ դիտվել են 21-23-ը և 29-31-ն ընկած ժամանակահատվածում: Տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 13-20մմ (96-215%), Լոռիում՝ 27-53մմ (138-296%), Տավուշում՝ 18-41մմ (91-256%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 28-37մմ (160-163%), նախալեռներում՝ 8-23մմ (50-162%), Գեղարքունիքում՝ 5-27մմ (33-107%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 22-47մմ (75-157%), նախալեռներում՝ 13մմ (76%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 12մմ (36%), նախալեռներում՝ 5մմ (30%), Արմավիրում՝ 7-14մմ (48-128), Արարատում՝ 1-21մմ (9-126%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 1-3մմ (10-12%), նախալեռներում՝ 1-5մմ (7-20%):



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ -9…-13^{0}C, Տավուշի և Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ -5…-7^{0}C, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում, Արարատյան դաշտում՝ -2…-4^{0}C (Մերձավան՝ -7^{0}C):

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Աշնանացան ցորեն

Հովտային շրջաններում շարունակվել, նախալեռնային և առանձին լեռնային շրջաններում վերսկսվել է աշնանացան ցորենի վեգետացիան:

Լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացանը գտնվել է հանգույցային արմատների առաջացման և թփակալման, հովտային շրջաններում՝ ցողունակալման փուլերում:

Ագրոօդերևութաբանական դիտարկումների, ինչպես նաև կենսունակության որոշման և ձմռան պայմանների վերլուծության արդյունքում աշնանացան ցորենի վնասվածությունը ձմռան ավարտին գնահատվել է 4-6%, որը վատ ցուցանիշ չէ հետագա աճի և զարգացման համար:

Պտղատուներ, խաղող

Արարատյան դաշտում և նրա նախալեռնային շրջաններում բազմամայա միջին ժամկետներին մոտ դիտվել է ծիրանենու մասսայական ծաղկում, դեղձենու բողբոջներն ուռչել են, տեղ-տեղ՝ բացվել:

Հովտային շրջաններում դիտվել է խաղողի վազի հյութաշարժ:



Արարատյան դաշտում ծիրանենու ծաղկման վիճակագրական տվյալներ

Խոտաբույսեր

Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճը:

Բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում հասել է 10-15սմ-ի: Տասնօրյակային աճը կազմել է 4-7սմ: